



## Համայնքի ղեկավարի և ավագանու աշխատանքից շատ բան է կախված. Իշխան Սաղաթեյան

28.08.2018

Գեղարքունիքի մարզում տեղի ունեցող փոփոխությունների, նախատեսվող ծրագրերի և նախորդող 100 օրերի գործունեության արդյունավետության մասին «Անկախը» գրուցել է մարզպետ Իշխան Սաղաթեյանի հետ:

**- Պարո՛ն Սաղաթեյան, կառավարությունն արդեն ամփոփում է իր 100-օրյա գործունեությունը: Շուտով Դուք ևս կամփոփեք: Ինչպե՞ս եք գնահատում Ձեր գործունեությունը նախորդ երեք ամիսներին: Ձեր առջև դրված խնդիրները որքանո՞վ եք իրագործել:**

- Կոռեկտ չի լինի, եթե իմ կատարած աշխատանքը ես գնահատեմ: Իմ աշխատանքը պետք է գնահատեն ժողովուրդը և կառավարությունը: Բայց եթե փորձեմ հակիրճ ամփոփել՝ նախորդ երեք ամիսներին աշխատել ենք շատ ծանրաբեռնված գրաֆիկով: Առաջին 1-1,5 ամիսներին ավելի շատ օպերատիվ շտաբի կարգավիճակում էինք, որովհետև դիմումները, բողոքները, կուտակված հարցերն այնքան շատ էին, որ գիշեր-ցերեկ փորձում էինք հասցնել: Այս ընթացքում գույքագրել ենք մարզի բոլոր խնդիրները, համայնքների մեծ մասում անձամբ ներկա եմ եղել, ծանոթ եմ առկա խնդիրներին: Մի շարք հարցեր կարողացել ենք լուծել, մի շարք խնդիրներ պլանավորել ենք, որ լուծենք: Բազմաթիվ հարցերի լուծումն էլ թողել ենք մյուս տարվան, որովհետև դրանց լուծումը ֆինանսական մեծ միջոցներ է ենթադրում:

**- Ասացիք, որ բոլոր հայանքների խնդիրները վեր են հանվել: Մարզի առաջնային խնդիրները որո՞նք են:**

- Տեսեք, հիմնական խնդիրը ոռոգման և խմելու ջուրն է: Այս խնդիրն առկա է համայնքների մեծ մասում: Երկրորդը ճանապարհների վատ վիճակն է: Համայնքներ կան, որտեղ վերջին 20 տարում որևէ ճանապարհ չի վերանորոգվել: Երրորդ՝ ունենք դպրոցների, մշակույթի տների, մանկապարտեզների վերանորոգման և շահագործման խնդիրներ: Սրանք այն հարցերն են, որոնց լուծումը ֆինանսական մեծ միջոցներ է ենթադրում:

Իսկ ընդհանրապես մեծ խնդիր է մարզի գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացումը, դրանք մեր մարզի զարգացման հիմնական ուղղություններից են: Հսկայական անելիքներ ունենք այս ոլորտներում: Հերթով, քայլ առ քայլ փորձում ենք գնալ առաջ:

**- Կառավարության առաջնահերթություններից է կոռուպցիայի դեմ պայքարը: Այս առումով ի՞նչ հաջողություններ ունեք և ո՞ր ոլորտներում:**

- Առաջին օրվանից առանձնացվել են ոլորտներ: Հանդիպել եմ կրթության ոլորտի ներկայացուցիչների հետ, փոխանցել եմ պահանջները, որոնք հիմա դրված են մեր առջև: Նույնը՝ առողջապահության ոլորտի ներկայացուցիչների հետ: Մի քանի համայնքներում վարչական ստուգումներ ենք իրականացրել, ներկայում էլ տարածքային կառավարման նախարարության հետ ուսումնասիրություններ ենք կատարում: Այսինքն՝ չկա մի դեպք, բողոք, որին անմիջապես չարձագանքենք:

**- Բայց այս ընթացքում կոռուպցիոն սխեմաներ բացահայտե՞լ եք, ինչ-որ բացահայտումներ ունեցե՞լ եք, թե՞ ոչ:**

- Որտեղ ունեցել ենք, փաստերն ուղարկել ենք համապատասխան մարմիններ, որ զբաղվեն: Մեծ ծավալի ուսումնասիրություններ ենք իրականացրել սոցիալական աջակցության կենտրոններում: Գավառի ծառայությունն ամբողջությամբ ազատել ենք, Սևանում մի քանի աշխատակից դիմումներ են գրել, մյուս երեք ծառայություններում ուսումնասիրություն է նշանակված:

**- Ձեր նշանակումից հետո մեծ կադրային փոփոխություններ չեք արել: Հին կոռումպացված համակարգով ինչպե՞ս եք պայքարում կոռուպցիայի դեմ:**

- Այդ հարցն ինձ շատ են տալիս: Առաջին օրվանից մեր աշխատակազմին հստակ պահանջները ներկայացրել եմ: Ովքեր այդ պահանջներին չհամապատասխանեն, նոր իրավիճակը չընկալեն, մեզ հրաժեշտ կտան: Պրոցեսը սկսված է, այնպես չէ, որ ազատումներ չեն եղել, այս պահին էլ մի քանիսն ընթացքի մեջ են, առաջիկայում ևս կլինեն, բայց կադրային ջարդ չի լինելու: Նրանք, ովքեր այս նոր իրավիճակին չեն կարողանում համակերպվել և աշխատել կամ ժամանակին աշխատանքի են տեղավորվել, բայց չունեն այդ որակական հատկանիշները, որ իրենց աշխատանքը բարեխղճորեն և պրոֆեսիոնալ իրականացնեն, հերթով հրաժեշտ են տալիս: Մա պրոցես է, որ առաջին օրվանից կա և շարունակվելու է:

Ես աշխատակազմը և մարզում պետական ապարատը լիարժեք ճանաչելու խնդիր ունեի, որ ճիշտ որոշումներ ընդունեի: Երբ մարդուն առաջարկում ես աշխատանքից ազատվելու դիմում գրել, հիմնավորումներ պետք է ունենաս:

**- Մարզի զարգացման առումով կարևոր է ենթակառուցվածքների, հատկապես՝ ճանապարհների դերը: Ինքներդ էլ կարևորեցիք: Կառուցվող և վերանորոգվող ճանապարհների որակի վերահսկողություն մարզպետարանն իրականացնո՞ւմ է: Ի՞նչ խնդիրներ են բացահայտվել ճանապարհաշինության ոլորտում:**

- Այստեղ մեր լիազորությունների շրջանակները բավականին սահմանափակ են: Հանրապետական նշանակության բոլոր ճանապարհները սպասարկում է տրանսպորտի և կապի նախարարությունը: Մենք սպասարկում ենք միայն միջհամայնքային

ճանապարհները, որոնք մեր հսկողության տակ են: Որոշակի դժգոհություններ ունեցել ենք սպասարկողներից, կանչել, հանձնարարել ենք, որ շտկեն:

Իսկ համայնքային ճանապարհների շինարարության վերահսկողությունն իրականացնում է համայնքը, բայց մենք՝ որպես մարզպետարան, փորձում ենք գործընթացի հսկողություն իրականացնել:

**- Սովորաբար «ասկատները» ճանապարհաշինության ոլորտում շատ են լինում: Կարո՞ղ ենք ասել, որ հիմա դրանք նվազագույնի են հասցված:**

- Կարող եմ ասել՝ մենք ամեն ինչ անում ենք, որ չլինեն: Եթե որևէ նման դեպք անգամ խոսակցության մակարդակով լսենք՝ անմիջապես արձագանքելու ենք և խորանալու ենք մինչև վերջ:

**- Մարզի զարգացման ծրագրի դրույթներից է զբոսաշրջությունը: Բացի Սևանում ամառային հանգստից, մյուս ուղղություններում ի՞նչ հաջողություններ կան: Եվ որո՞նք են մարզում զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտները:**

- Մարզում զբոսաշրջության զարգացման թիվ մեկ խոչընդոտը սեզոնայնությունն է: Այսինքն՝ ներդրողների տեսանկյունից ձեռնտու չէ խոշոր ներդրումներ անել զբոսաշրջության ոլորտում, քանի որ հյուրանոցները, հանգստյան տներն աշխատում են շատ կարճ՝ 40-45 օր, որովհետև եղանակային պայմանները թույլ չեն տալիս: Հետևաբար մարզում զբոսաշրջությունը զարգացնելու համար մեր խնդիրն է այդ սեզոնայնությունը երկարացնելը, որպեսզի մարզը դառնա ձմեռային զբոսաշրջության համար գրավիչ: Դրա համար մի շարք գաղափարներ ունենք, օրինակ՝ Սևանում նաև ձմեռային ենթակառուցվածքներ ստեղծելը: Եթե կարողանանք առաջիկա տարիներին 1-2 լեռնադահուկային կոմպլեքս կառուցել, միանգամից կփոխվի մեր մարզի զբոսաշրջային գրավչությունը:

Վարչապետի հանձնարարությամբ ստեղծվել է հանձնախումբ, որն ուսումնասիրում է այս ոլորտի բոլոր հիմնախնդիրները, այդ թվում և ազգային պարկի հետ կապված բազմաթիվ խնդիրներ: Հենց հիմա Սևանի ավերի հետ կապված մի քանի նախագծեր կան: Բայց պետք է նկատի ունենալ, որ այս կարճ ժամանակահատվածում Սևանում նոր հյուրատներ կամ նոր ենթակառուցվածքներ չէին կարող կառուցվել: Հույս ունեմ, որ մյուս տարվանից սկսելու ենք հսկայածավալ ծրագրեր:

**- Ձեր խոսքում կարևորեցիք գյուղատնտեսության զարգացումը: Մարզի զարգացման ծրագրում ևս ամրագրված է գյուղատնտեսության զարգացումը և տեխնիկական արդիականացումը: Մակայն տարեցտարի ավելանում է չմշակվող հողերի մակերեսը: Ինչպե՞ս էք նախատեսում խրախուսել գյուղացուն հողը մշակելու հարցում:**

- Մեր մարզում, չնայած գյուղատնտեսության համար մի շարք նպաստավոր պայմաններ կան, երկարատև ձմեռը, եղանակային պայմանները խոչընդոտում են: Մենք հստակ տեսնում ենք գյուղատնտեսության զարգացումը մեր մարզում, բայց դրա համար պետք է

Ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառել: Ընդամենը մեկ շաբաթ առաջ կարկուտը մեծ վնաս հասցրեց մեր մարզի գյուղատնտեսությանը:

Հիմա գյուղնախարարությունը ապահովագրության պիլոտային ծրագիրն է առաջ քաշել, հնարավորություն է ստեղծում ցածր տոկոսադրույքով վարկերով գյուղտեխնիկա ձեռք բերել, մարզում բավականին կոոպերացիաներ են ստեղծվել: Բայց կոոպերացիաները, իմ կարծիքով, այս պահին արդյունավետ չեն աշխատում:

Միշտ փող դրվել է ոլորտում: Բայց արդյունքները գոհացուցիչ չեն:

**- Իսկ հատակեցվե՞լ է, թե ինչպես կարելի է այդ ներդրումներն արդյունավետ դարձնել:**

- Տեսեք, առանց ջրի գյուղատնտեսություն հնարավոր չէ զարգացնել: Հիմա մարզում երկու ջրամբար կառուցելու նախնական գաղափար կա, որը քննարկվել է կառավարությունում: Ջրագծերի խնդիր ևս կա:

Մարզում ոռոգման և խմելու ջրի ցանցերի կառուցման վերաբերյալ նախնական համաձայնություն ունենք, սպասում ենք, որ կոնկրետ թվերի ու համայնքների մասին հայտարարություն լինի:

Կառավարությունը խիստ անհրաժեշտության ծրագրերով նախատեսում է հանրապետության մարզերում մեծ գումարներ ներդնել: Այդ գումարները կներդրվեն այն համայնքներում, որտեղ լրացուցիչ բերք-բարիք ստեղծելու հնարավորություն կա:

**- Գեղարքունիքի մարզը հանրապետությունում առաջատարներից է արտագնա աշխատանքի մեկնողների թվով: Հետևաբար նաև մեծ գումարներ են արտերկրից մարզ հոսում: Բայց այդ գումարները հիմնականում բիզնեսի կամ ներդրումների չեն վերաձվում: Մարզպետարանը նախատեսո՞ւմ է այդ ուղղությամբ վերապատրաստման կամ խորհրդատվական ծրագրեր իրականացնել, որպեսզի դրսից բերված գումարներն այստեղ բիզնեսի մեջ ներդրվեն:**

- Եթե կա մարդ, որը կարող է անգամ մեկ աշխատատեղ ստեղծել մարզում, պատրաստ եմ իր հետ նստել և ժամերով խոսել:

Այս ընթացքում 2-3 տասնյակ մարդկանց հետ ենք ժամերով խոսել, քննարկել, թե որտեղ կարելի է ներդրումներ անել և ինչ արդյունքներ է հնարավոր ունենալ: Հույս ունեմ, որ այս ամենը կվերաձվի նաև գործնական քայլերի:

**- Մարզից ոչ միայն արտագնա աշխատանքի են մեկնում, այլև արտագաղթում են արտերկիր կամ Երևան: Պատճառներից մեկը մարզային բնակավայրերի գրավիչ չլինելն է: Ի՞նչ ծրագրեր եք նախատեսում մարզային բնակավայրերի գրավչությունը մեծացնելու, համապատասխան միջավայր ստեղծելու ուղղությամբ. խոսքը միայն աշխատատեղերի մասին չէ:**

- Ամենակարևոր խնդիրներից մեկն է դա: Երբ ասում ենք՝ մարզում լավ բժիշկ չունենք, որակյալ մասնագետ չունենք, շատ մարդիկ կան, որ պատրաստ են գալ և մարզում

աշխատել: Բայց նրանց համար պետք է նաև միջավայր լինի: Այսինքն՝ տվյալ քաղաքում պետք է նաև ընտանեկան սրճարան, թատրոն, մշակույթի տուն, լավ դպրոց, լավ մանկապարտեզ լինեն որպեսզի մարդը մայրաքաղաքից գա մարզ աշխատելու: Խնդիրը միայն աշխատավարձը չէ, նաև պայմաններ կան, որ անհրաժեշտ են:

Գավառում մի քանի օր հետո կբացենք թատրոն, որը խոշոր ներդրում է մարզի համար և հիանալի հնարավորություն է այդ միջավայրի ստեղծման տեսանկյունից:

Սևանում նույն նախաձեռնությունը կա. մշակույթի տունն է վերանորոգվում, բիզնես կենտրոն է կառուցվում:

**- Արտագաղթի պատճառով նաև բնակավայրերի ծերացման խնդրին ենք դեմ առել: Գեղարքունիքը ևս զերծ չմնաց համայնքային դպրոցների միավորման խնդրից: Արդյոք սա նշանակո՞ւմ է, որ պետական մակարդակով համակերպվել ենք ծերացող, վերացող համայնքների իրողության հետ:**

- Բացարձակապես: Որ օրը համակերպվեցինք այդ մտքի հետ, դա մեր վերջը կլինի: Նախ, իմ կարծիքով, որևէ բնակավայրում դպրոց չպետք է փակվի: Բայց մարզում ունենք մի դպրոց, որն ունի մեկ աշակերտ: Այդ մեկ աշակերտի համար դպրոցում 13 հաստիք է պահվում և տարեկան 30 մլն ծախս է իրականացվում: Այստեղ էլ պետք է հասկանալ՝ ծախսի արդյունավետությունը որն է:

Դեպք առ դեպք պետք է նայենք: Համատարած որոշում ընդունելը սխալ է: Այդ մի աշակերտի պարագայում, կարծում եմ, նա պետք է հաճախի այլ դպրոց: Ավելի ձեռնտու է այդ երեխային հատկացնել վարորդ և ամենագնաց, որ նրան հարևան համայնքի դպրոց տանի-բերի: Բայց համայնք կա, որ սահմանապահ է, ունի 5 աշակերտ: Նման դպրոցը չես կարող փակել: Այսինքն՝ ընդհանուր որոշում ունենալը սխալ է, դեպք առ դեպք պետք է նայես:

**- Անդրադառնանք կրթության իրավունքին: Մարզային բնակավայրերի գրավչության նվազ լինելու պատճառներից մեկն էլ այն է, որ այստեղ ապահովված չէ կրթության հավասար հնարավորությունը: Այս ուղղությամբ ի՞նչ քայլեր եք նախատեսում:**

- Մենք հիմա համայնքների ղեկավարներին հորդորում ենք, որ խաղահրապարակներ կառուցեն իրենց համայնքներում: Մենք պարտավոր ենք մեր երեխաների համար ապահովել այդ պայմանները: Եթե հիմա հայտարարեմ, որ գյուղի երեխայի համար կստեղծենք այն բոլոր հնարավորությունները, ինչ կա մայրաքաղաքում, անկեղծ չեմ լինի: Բայց տարբերությունն էլ պետք է այդքան շատ չլինի:

Ի՞նչ ենք անում: Պետք է հասկանանք մեր հնարավորությունները: Համայնք կա, որ իր սահմանափակ միջոցներով ունի մանկական խաղահրապարակ, ծերերի համար խաղասրահ, ունի ինչ-որ ենթակառուցվածքներ: Իր կողքի համայնքը նույն բյուջեով ու նույն տարածքով ոչ մի բան չունի: Այսինքն՝ համայնքի ղեկավարի և ավագանու աշխատանքից շատ բան է կախված:

- Համայնքապետարաններն իշխանության առաջնային օղակներն են, որի հետ առնչվում են քաղաքացիները: Եվ այս մակարդակում տեղի ունեցող անօրինություններն էլ մեծ մասամբ դժգոհությունների պատճառ են դառնում: Համայնքների հետ համագործակցության, համայնքներում վերահսկողության ի՞նչ մեխանիզմներ եք կիրառում օրինախախտումներն ու դժգոհությունները բացառելու համար:

-Մենք ունենք վարչական վերահսկողության հնարավորություն: Մեր այս գործառույթն ամբողջությամբ իրականացնում ենք: Եթե այս ժամանակահատվածում եղել է քաղաքացու բողոք համայնքի ղեկավարից՝ անմիջապես արձագանքել ենք: Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ իսկապես քաղաքացու իրավունքները ոտնահարվել են: Նման դեպքերում մենք համայնքապետին հորդորել ենք շտկել իրավիճակը: Եվ մեծ մասամբ այդ հարցերը լուծվել են:

Մենք ունենք պլանային վարչական վերահսկողություն, որ տարվա ընթացքում իրականացնում ենք: Եթե տեսնում ենք համայնքներ, որտեղ խնդիրներ կան, տարածքային կառավարման նախարարությունից թույլտվություն ենք խնդրում լրացուցիչ վերահսկողություն իրականացնելու համար: Այսինքն՝ մեր իրավասության սահմաններում ամեն ինչ անում ենք, որ նման խնդիրներ չլինեն:

**- Գեղարքունիքում արդեն կան խոշորացված համայնքներ: Ձեր կարծիքով՝ խոշորացումը որքանո՞վ է արդարացրել ակնկալիքները:**

- Մարզում ունենք խոշորացված համայնքներ, որոնք ճիշտ չեն խոշորացված՝ սկսած կենտրոնի ընտրությունից մինչև գյուղերի միավորումը: Սուբյեկտիվ ընտրություն է եղել, ինչը խանգարում է, որ խոշորացված համայնքները լիարժեք աշխատեն:

Խոշորացում անելուց առաջ պետք է բնակչության կարծիքը լսել, քննարկել, արդյունավետությունը հասկանալ: Բայց այս իրավիճակում, երբ պետությունը գնում է համաֆինանսավորման ճանապարհով և շատ ծրագրերում համայնքը ևս պետք է ֆինանսական մասնակցություն ունենա, որպեսզի կառավարությունը ևս մասնակցի, փոքր համայնքները զարգացման հնարավորություն չեն ունենում: Բայց խոշորացման արդյունավետության համար կարևոր է, որ համայնքները ճիշտ միավորվեն:

**- Հեղափոխությունից հետո մարդիկ արագ փոփոխություններ են ակնկալում, մինչդեռ զարգացումները դանդաղ են ընթանում: Ձեր կարծիքով՝ մարզում տեղի ունեցող փոփոխությունների տեմպերը որքանո՞վ են բավարար քաղաքացիներին չհիասթափեցնելու համար:**

- Տեսեք, որ մարզում բան է փոխվել, ակնհայտ է: Քաղաքացիների ընդունելության օրը 100-ից ավելի քաղաքացի է հերթագրվում: Նաև գյուղեր եմ այցելում: Այդ անմիջական կապը, որ մարդկանց խնդիրները լսում ես և փորձում ես լուծել, մարդիկ զգում են: Բայց կան մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար ժամանակ է պետք, կամ որոնք մեր իրավասության սահմաններում չեն: Օրինակ՝ մեզ շատ են դիմում իրավական խնդիրներով, դատական վեճերով, անգամ խորհրդային տարիների դատավճիռներն են

ցանկանում բողոքարկել: Այդ մարդկանց ուղղորդում ենք դատարան դիմել: Գուցե այս մարդիկ հիասթափություն ունենան, որ իրենց հարցն արագ չի լուծվում:

Մենք ամեն ինչ անում ենք, որ այդ հիասթափությունը չլինի: Աշխատում ենք շատ բաց: Մարզում որևէ հիմնարկի ղեկավար կամ աշխատող ինձ հանդիպելու խնդիր չունի, սենյակից չեմ ղեկավարում մարզը:

**- Իսկ մասնավոր խնդիրների հետևից գնալը չի՞ խոչընդոտում համակարգային խնդիրներով զբաղվելուն:**

- Խոչընդոտում է: Մեր ժամանակի մեծ մասը հաճախ դիմումներով ու բողոքներով զբաղվելուն է գնում: Գլոբալ ռազմավարական ծրագրերի համար այն ժամանակը, որ կուզենայինք ունենալ և դրանցով զբաղվել, չենք ունենում: Դա չի նշանակում, որ չենք զբաղվում, ծրագրեր չենք կազմում, բայց այն ժամանակը որ կուզենայինք ունենալ, չենք ունենում: Սյուս կողմից՝ չես կարող այն հարցերն անտեսել: Պետք է կարողանաս երկուսն էլ հասցնել: Մենք փորձում ենք: